

## Մ.Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

### ՀԱԼՈՑՔԻ ՇՐՋԱՆ. ՈՃՐԻ ԵՎ ՊԱՏԺԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Քննվում են հալոցքի շրջանի գրականության գաղափարախոսական, քաղաքական և հոգեբանական ակունքներն ու դրանց կապերի, երկրում մարդկային և ստեղծագործական հարաբերական ազատությունների սահմանների խնդիրները:

**Առանցքային բառեր.** հալոցք, մտավորական, ոճիր, պատիժ, զոհ, դահիճ:

**Ներածություն:** Ստալինի մահից և հատկապես Բերիայի գնդակահարությունից հետո զգուշությամբ և աստիճանաբար, ինչպես հատուկ է ոչ հեղափոխությամբ բարեփոխումների ուղին բռնած բռնապետություններին, բանտերից և աքսորավայրերից սկսեցին վերադարձվել բռնադատվածները, այդ թվում՝ հայ գրողները: Դա ամենևին չէր նշանակում, թե մթնոլորտի արմատական փոփոխություն էր կատարվել: Մահարուն և Կամսարին դժվարությամբ էին տպագրում, մինչդեռ 1920-30-ականներին նրանց դեմ անգիջում պայքար մղածները շարունակում էին զբաղեցնել հանրապետության գրական կյանքը տնօրինող պետական բարձր պաշտոններ:

**Հալոցքի շրջանի խորհրդահայ գրականության բուն էությունը:** Գնահատման հակադիր մոտեցումները շարունակվեցին թե՛ հեղինակների, թե՛ խորհրդային կայսրության մահերից հետո՝ 21-րդ դարում: Զարյանին, Քոչարին և մյուսների դրսևորած վարքը հասկանալու և ըմբռնումով մոտենալու համար հանդես եկան ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտը, Սիլվա Կապուտիկյանը, Նվարդ Քոչարը, Ազատ Եղիազարյանը, հակառակ պնդմամբ՝ Մահարու որդին՝ Գրիգոր Աճեմյանը, Նորայր Աղայանը և ուրիշներ: Թեև առանձին դեպքերի և դեմքերի հետ կապված հրատարակվեցին բազմաթիվ գրքեր և հոդվածներ, եղան ժամանակաշրջանը և անձանց դերակատարությունը վերլուծության ենթարկող հետազոտություններ, անգամ ՀՀ ԱԺ-ում անհաջող փորձ արվեց ընդունել «ՀՀ օրենք լյուստրացիայի մասին» (2011թ.), սակայն բուն խնդրին մոտեցման հարցում չեղավ պետական կամ հանրային ընդհանրական վերաբերմունք:

Հաշվի առնելով ամբողջատիրություններում անհատի որոշիչ դերը, ինչպես նաև խորհրդային ամբողջատիրության էության չփոփոխվելը, բնական է, որ նույնիսկ հալոցքի շրջանում խորհրդահայ իրականության մեջ գրեթե անհնար էր ոչ միայն դաժանությունների, անարդարության և ճշմարտության մասին ամբողջական հուշեր հրապարակելը, այլև, առաջին հերթին, համակարգի էության բացահայտումը, մերժումը: Թեկուզ մեկ շրջանի (Կապանի) սահմաններում,

սակայն կես դար հեռավորությունից նման մի հաջողված փորձ է կապանցի Գրիշա Սմբատյանի «Երկաթե վարագույրից այս կողմ» գիրքը [1]: Ազգային էթնիկ հոգեբանության հանգամանք ձեռք բերած անվստահությունը, կասկածամտությունը, զգուշավորությունը, վախվորածությունն արտահայտվեցին նաև գրականության մեջ, մինչդեռ ռուս և մերձբալթյան նույն իրականության մեջ գրողներն առավել բաց քննարկման, մինչև իսկ համակարգային մերժման դրսևորումներ ունեցան, ինչպես, օրինակ, Սոլժենիցինի հռչակավոր գործը, որ իր գեղարվեստական կատարմամբ թեև զիջում է Մահարու «Ծաղկած փշալարերին», բայց հանգում է համակարգային մերժման. մի բան, որ տեսնում ենք բացառապես Լեո Կամասարի անտիպ գործերում: Եվ իզուր են տարակուսանքները, թե ինչո՞ւ Սոլժենիցինը կամ Պաստեռնակը կարող էին արժանանալ Նոբելյան մրցանակի, իսկ Մահարին՝ ոչ, քանի որ, ինչպես Մահարու բազմավաստակ որդին է արձանագրում, նա «...ձեռնամուխ եղավ սիբիրական թեմային այնքանով, որքանով դա թույլատրում էր ժամանակը», և «զգացվում էր ներքին գրաքննիչը», վերջապես՝ «Գ. Մահարին այլախոհ չէր այդ հասկացողության այն օրերի իմաստով» [2]:

Խորհրդահայ հուշագրության համար հալոցքի շրջանի նվաճումն այն եղավ, որ գրողները կարողացան կիսաճշմարտություններ բարձրաձայնել, հաճախ՝ առավել անվտանգ ու ծածկագրված՝ գեղարվեստի մակարդակում: Սակայն ոչ միայն բռնությունների տասնամյակների թեման, այլև նախորդ շրջաններից փակ մնացած ցեղասպանության և գաղթի, ինչպես նաև արգելված հերոսների թեմաները խիստ որոշակի շրջանակներում արձարծելու հնարավորություն, այնուամենայնիվ, ընձեռվեց:

Այդ նույնիսկ կիսաճշմարտությունների զգալի մասը տպագրվեց միայն Խորհրդային Միության վերացումից հետո:

**Ոճի և պատիժ:** Խորհրդային գաղափարախոսական, ըստ այդմ՝ ռուս խորհրդային գրականության դիրեկտիվների շրջանակում ծավալվող խորհրդահայ գրականությունը խորքային քննումներում օրինաչափորեն հետնապահի կարգավիճակ ուներ, որքան էլ որ երբեմն հաջողվում էր հաշտեցման խողովակ գտնել մինչդուռական հայ գրականության ավանդների և գաղափարախոսականության միջև: Ռուս նոր գրականությունն ի սկզբանե բարու և չարի, ոճի և պատժի, վերջիվերջո՝ լավի և վատի արժեքաբանական հենք ուներ, որը երբեմն առաջ էր ընկնում մինչև իսկ արևմտյան փիլիսոփայական, գեղագիտական և բորայագիտական մատուցումներից: Մինչդեռ հայ գրականությունը, լինելով անիրավված ազգի իդեալների հայելին, հիմնականում պտտվում էր ազգային-ազատագրական գաղափարի շուրջ, որ Վ. Տերյանը սրությամբ բնորոշեց այսպես. «Մեր [նոր] գրականությունը սկզբից մինչև մեր օրերը գավառական, կիսա-գյուղական

գրականություն է եղել...» [3]: Եթե ռուս նոր գրականության վեպի ակունքում կանգնած Դոստոևսկին «Կարամազով եղբայրներում» նախ հարցադրում էր անում ու քննում՝ «Ինչո՞ւ է ապրում այսպիսի մարդը» [4], ապա հայ վեպի խոշորագույն դեմքի՝ Ռաֆֆու համար «Սամվելում» ի սկզբանե միանգամայն պարզ էր վճիռը՝ «Բազմության միջից լսելի եղան ուրախաձայն աղաղակներ՝ Արժանի՛ էր...» [5]:

Հալոցքի շրջանի հուշագրության քմիան առավել հստակ կարող է դարձնել տիպական մի հուշագրության հպանցիկ անդրադարձը: Խորհրդային նախկին չեկիստ Սուրեն Ղազարյանը հալոցքի տարիներին գրում է «Դա չպետք է կրկնվի» վերնագրով հուշագրությունը [6], որը լույս է տեսնում միայն գորբաշովյան բացախոսության շրջանում՝ 1988թ.-ին: Հիրավի, անաչառորեն երբևէ չլուծվելիք խնդիր է՝ արդյո՞ք միևնույն համակարգի կողմից վերացված, ասենք, գրող Բակունցին և չեկիստ Մուղդուսուն պետք է հավասարապես զոհ համարել. որտեղո՞վ է անցնում սահմանը: Կարո՞ղ է սովորական մարդը, ով ապրումակցում է խորհրդային համակարգի հարյուրհազարավոր զոհերին, համարել, որ տեղին է, երբ դահիճներն իրենք ևս, առանց արդարամիտ դատաստանի, հայտնվել են նույն մտադացում, ավելին՝ կարո՞ղ են չարախնդալ և փոքր-ինչ հատուցված ու մխիթարված զգալ: Այդպիսի սահմանագծումը վերացված տեսնելու հոգեբանական խնդիր են ունեցել նախապես դահիճ, ապա՝ իրենց իսկ համակարգին կույ գնացածներից նրանք, որոնք չեն գնդակահարվել և հաջողել են ողջ մնալ բանտերում և աքսորավայրերում: Այդպիսիների համար ծանր բեռ են թեկուզ կյանքի մի շրջանի համար շրջապատի կողմից դահիճ ընկալվելն ու այդ բեռով ապրելը, ուստի ամենից հեշտ ճանապարհներն են՝ ա) գտնել ու անվանել մեկ կամ մի քանի քավության նոխագ, բ) հայտարարել, որ իրենք չեն իմացել իրականությունը, կարծել են, թե հանուն իրենց հայրենիքի են գործում: Հենց այս երկու ճանապարհներն էլ ընտրեցին խորհրդային կայսրության ղեկավարներն ու ողջ մնացած նախկին դահիճները: Նախ՝ Բերիային ու Ստալինին անվանեցին խորհրդային սարսափների հեղինակ, իմա՝ քավության նոխագ-մեղավոր, որոնց հավելեցին նաև բացառապես այն բարձրաստիճան կուսակցական և չեկիստական գործիչներին, որոնք կարող էին վտանգ սպառնալ խրուշչովյան նոր իշխանությանը: Այսինքն՝ կայսրությունը կոծկեց մեղավորության *համակարգային* լինելը, որը դարձավ չգրված հրահանգ: Այդ չգրված հրահանգն օդում որսացածներից էր նաև չեկիստ Սուրեն Ղազարյանը, որն այդ ոգով հուշագրություն գրեց:

Հատկանշական է, որ հալոցքի տարիներին հեղինակը փորձել է հրատարակել իր հուշագրությունը, որի համար գրավոր դիմել է ոչ միայն Հայաստանի

գրողների միության բարձր պաշտոնյա Պարույր Սևակին, այլև մոսկովյան «Новый мир» հանդեսի գլխավոր խմբագիր Ալեքսանդր Տվարդովսկուն, ովքեր բացասական ոչինչ չասելով, այնուամենայնիվ, քաղաքավարորեն խուսափել են տպագրել (նրանց պատասխան նամակները խմբագիրները հրատարակել են 1988-ի գրքում): Հայաստանում չտպագրելը լիովին տեղավորվում է հայ մտավորականների՝ նույնիսկ հալոցքի շրջանում որդեգրած ծայրահեղ զգուշավորության տրամաբանության մեջ: Իսկ Տվարդովսկու խուսանավումը, որի հայրն ու մայրը և չորս քույր-եղբայրները ստալինյան տեղահանության էին ենթարկվել, ինքն էլ հետագայում համարվեց «խորհրդային վաթսունականների» խորհրդանիշը, կապված է ստալինական ռուսական մտավորական միջավայրի սերուցքի կողմից ստալինյան պատժիչ կառույցներում ծառայածների հանդեպ խորշանքի հետ (օրինակ՝ ոչ հայ Անտոնինա Մահարին, չնայած հասուն տարիքում որոշ ժամանակ Հայաստանում ապրած լինելու հանգամանքին, որի աշխարհընկալումն ու պափոնար մոտեցումները ձևավորվել էին ոչ հայ միջավայրում, իր հուշագրության մեջ կտրուկ է արտահայտվում. «Նրանք [չեկիստները] մարդ չեն: Իսկական մարդը երբեք չի գնա Գեստապոյում կամ ԲԴԿ-ում ծառայելու» [7]): Հալոցքի շրջանում, երբ հայ մտավորականներից միայն հատուկները համար-ձակվեցին գրել ստալինյան իրականության մասին՝ չհանդգնելով հանձնել հրատարակության (միայն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակը տպագրվեց, այն էլ՝ արտասահմանում [8]). թեև այդտեղ հակախորհրդային ոչինչ չկար, ավելին՝ Մահարին անգամ չմոտեցավ իր կյանքը խորտակած համակարգի հենց համակարգային մերժմանը, ինչն արեց ազգությամբ ոչ հայ իր կինը՝ Անտոնինա Մահարին), նույն Տվարդովսկին իր հանդեսում հրապարակեց Սոլժենիցինի «Իվան Դենիսովիչի մեկ օրը» [9] պատմվածքը: Եվ սա ամենևին միայն խորհրդահայ գրողներին հատուկ սրված զգուշավորություն չէր. խորհրդահայ գրաքննադատական համայնքը ևս նույն զգուշավորության տիրույթում էր: Այսինքն՝ քանի որ հայ մտքի մեջ չճանաչվեց ոճիրը, ուստի պատժի գիտակցման անհրաժեշտությունը ևս չեղավ:

**Եզրակացություն:** Ա. Եթե մեկ արտահայտությամբ բնորոշելու լինենք հալոցքի շրջանի խորհրդահայ գրականության բուն էությունը, ապա դա վախվորածության հասնող զգուշավորությունն է, որի սահմաններում ծածկագրվեցին նախորդ՝ ստալինյան շրջանում փակ թեմաները, ինչպես նաև համակարգային մերժման չհասած խորհրդային բանտի ու աքսորի, մարդու անիրավման ու ճակատագրերի խեղման թեմաները: Բ. Պետականագրկության պատճառով արմատացած արժեքային հազարամյա քառսը թույլ չտվեց, որ հայ գրականությունն առավելագույնս օգտագործի հալոցքի շրջանի հարաբերական ազատու-

թյունը և հայ հանրության գիտակցության մեջ համակարգի «ոճրի և պատժի», համամարդկային «լավի և վատի», «հայրենասիրության և փարիսեցիության» կենսական անհրաժեշտության սահմանային արժեքը: Գ. Մահարին, Արմենը, Ալազանը, Նորենցն ու չքոնադատված և/կամ հետագայի հայ գրողները չեն հասել խորհրդային կայսրության բուն էության համակարգային մերժման կամ քննադատման՝ շրջանցելով այն: Սա խորհրդահայ և ռուս, ուկրաինական և մերձբայթյան խորհրդային մտավորականների քաղաքացիական արիության և հաճախ մտքի խորության մակարդակների տարբերության ամենացույց վկայություն է:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ամբաստյան Գ.** Երկաթե վարագույրից այս կողմ. 1920-30թթ. քաղաքական բռնաճնշումների ենթարկված Կապանն ու կապանցիները, Եր., Զանգակ-97, 2009:
2. **Մահարի Գ.** Սիբիրական, Եր., ԵՊՀ, 2009, էջ 15, 17, 19:
3. **Տերյան Վ.** Երկեր, Հայ գրականության գալիք օրը, Եր., 1989, էջ 333:
4. **Դոստոևսկի Ֆ.** Կարամազով եղբայրներ, Եր., ՍԳ, 1983, էջ 96:
5. **Բաֆֆի.** Երկերի ժողովածու, Եր., Հայպետհրատ, 1956, էջ 560:
6. **Ղազարյան Ս.** Դա չպետք է կրկնվի, Եր., ՍԳ, 1988:
7. **Маарн Антонина.** “Моя одиссея”.- Ереван: Союз писателей Армении, 2003.- С. 39.
8. «Նաիրի» ազգային-գրական շաբաթաթերթ, Պէյրուֆ, 07.11.1971, թիւ 22-ից մինչև 05.03.1972, թիւ 39:
9. “Новый мир”.- Москва, 1962.- № 11. – С. 8-74.

#### Մ.Գ. АЙРАПЕТЯН

#### ПЕРИОД ОТТЕПЕЛИ: ВОСПРИЯТИЕ ПРЕСТУПЛЕНИЯ И НАКАЗАНИЯ

Рассматриваются идейно-политические и психологические истоки и связи литературы периода оттепели, проблемы границ относительных свобод человека и творчества в стране.

*Ключевые слова:* оттепель, интеллигент, преступление, наказание, жертва, палач.

#### M.H. HAYRAPETYAN

#### THE THAW PERIOD: THE PERCEPTION OF CRIME AND PUNISHMENT

The ideological, political and psychological origins and connections of the literature of the thaw period, the problems of the limits of relative freedoms of a human and creative art in the country are examined.

*Keywords:* thaw, intelligent, crime, punishment, victim, executioner.